



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել և նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Դ 7064

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԽԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԴԱՍՏԱՐՁՎԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ԴԵՊԻ ՄԱՍՍԱՆԵՐԸ

ՍՊԸԴԸԴՎԼԿԵՎԸՐՉՈՒԹՅՈՒՆ

15 1162

ԽԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐՁԱՎԻ  
ՏԵՂԵԿԱՏՈՒԻ

Կազմեց Մ. Դուրգանյան

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԾՐԸՎԱԿԱՆ - 1929

294


ՆԱԽԱԴՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԴԵԳԻ ՄԱՍՍԱՆԵՐԸ

ԱՊՅԱՆԱԼԻԱԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԴՐՈՑԱԿԱՆ ԱՐԺԱՎԻ  
ՏԵՂԵԿԱՏՈՒ

A 7958

Կազմեց Մ. Դուրգանյան



ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԾՎՈՒԹՅՈՒՆ

օգոստոս - 1929

ՊԵՏՑՐԱՏԻ II ՏՄԱՐԱՆ

ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գալ. № 1002 Հրատ. № 1060

Գրառ. № 2762<sub>բ.</sub> Տիրագ. 1200

## ՆԱԽԱԴՐՈՑԱԿԱՆ ԱՐՇԱՎԻ ՆՇԱՆԱ- ԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախադրոցական ցանցը մեղ մոտ չի  
ընդգրկում բոլոր բանվորուհիների և աշ-  
խատավոր գեղջկուհիների յերեխաներին.  
պահանջն այնքան մեծ է, վոր բյուջետա-  
յին կարգով բավարարել այդ պահանջն  
այժմ հնարավոր չեւ:

Հարկավոր ե հասարակական լայն ող-  
նություն, արտակարգ նոր ձևեր նախադրոց-  
ցանցը լայնացնելու և յերեխաների ընդ-  
դըրկման տոկոսը մեծացնելու համար:

Նախադրոց. արշավին այդ նոր արտակարգ  
ձևն ե, վոր խորացնելու յե նախադրոցա-  
կան դաստիարակության գործը:

Անցյալ տարի կուլտարշավին անգրագի-  
տության վերացման գործում չափազանց  
խոշոր նվաճութներ ունեցավ:

Այդ արշավին առացուցեց, վոր աշխատա-  
վորական լայն դանդվածներն ունեն ահեղ

եներգիա և ցանկություն՝ կուլտուրական  
ֆրոնտում հաղթանակներ տանելու:

Այժմ, սկսելով նախադպրոցական ար-  
եավը, մենք կը կին դիմում ենք այդ եներ-  
գիայի աղբյուրին՝ աշխատավորության ի-  
նիցիատիվային ու նրա մասնակցությանը  
մատադ սերնդի դաստիարակության գոր-  
ծին:

Սոցիալիստական մըցման միջոցով ա-  
ռաջ պետք է գան գործարանները, կոլտըն-  
տեսությունները, տեղկոմները, կոռպերա-  
տիվ ընկերությունները, պատգամավորա-  
կան խմբակները, պիոներ կոլլեկտիվները, —  
բոլորը պետք է մասնակցեն նախադպրոցա-  
կան արշավին: Կուսակցական, պրոֆեսսիո-  
նալ խորհրդային լայն հասարակայնության  
ոգնությամբ կամրացնենք մատադ սերնդի  
կոմմունիստական դաստիարակությունը:

**Սոցգասգլխավարչություն**

## ԴԵՐԻ ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ԱՐՇԱՎ

Նախադպրոցական դաստիարակությունը իր զարգացման նոր շրջանն եւ ապրում: IV համագումարի (1928 թ. դեկտ., Մոսկվա) լողունզը՝ «մասսայական նախադպրոց. դաստիարակություն»—արձագանդ եւ գըտնում աշխատավորության լայն մասսաների կողմից:

Այս տեսակետից չափազանց ուշագրավ եւ այն հետաքրքրությունը, վոր նկատվում եւ դեպի նախադպրոցական դաստիարակությունը Խորհրդային Ռուսաստանում: Նախադպրոցական դաստիարակության մասին դեկուցվել եւ կդիկ-ում, Փողկոմխորհում, ԼկթեՄ և պիոներ..կտղմակերպության կենտրոնական որդաններում: Այս խնդրով զբաղվել եւ պիոներ. կոնֆերենցիան, Լուսաշխի կենտր, Վարչությունը, Ճենտրոսոյությունը, կդիկ-ին կից «մարտի 8-ի հանձնաժողովը» և այլն եւ այլն: Տեղերին դիրեկտիվներ են տվել նախադպրոց. արշավին:

մասնակցելու Համ. արհ. միութ. կենտր. խորհուրդը (ՎՃԱՊՄ), Առժողկոմատը, Բը-նակմիությունների կենտր. Խորհուրդը (ՃՃՄ), ԼԿՅԵՄ կենտրկոմը և մի շարք այլ կազմակերպություններ։

Մոսկվայի ակադեմիական թատրոնում նախադպրոցական արշավի վերաբերյալ վերջերս հրավիրված հանդիսավոր խորհրդակցությունը վերածվել է հոյակապ ցույցի, զրավելով պրոլետարական հասարակայնության լայն ուշադրությունը։ Թե մեր (Անդրկովկ.) և թե Ռուսաստանի բարձրագույն որդանները հատուկ վորոշումներ են հանել նախադպրոց գործին հատկացումներ անելու մասին ՓՍԲՌ-ի (ֆոնդ ուլուշենիա բյտա բարությունների աշխատավարձի գումարներից։

Խորհրդային Հայաստանը նույնպես միանում է այդ շարժման. կուս.-խորհրդապրոֆեսիոնալ և հասարակական կազմակերպությունները, Լուսֆողկոմատի գլխավորությամբ համախմբվել են արշավը ղեկավարող կենտր. Շտաբում և նախապատրաստական աշխատանքներ են տանում։ Առաջին անգամն է, վոր մեզ՝ մոտ նախա-

դպրոց. գաստիտրակությունն այդպիսի հետաքրքրություն և հարուցել մասսայական կազմակերպություններում։ Անշուշտ ամենամոռ ապագայում այս կազմակերպություններն իրենց գծով կղբաղվին արշավի մասսայականացման խնդիրներով և համապատասխան դիրեկտիվներ կտրվին ՀԱՄԽ-ի, Լուսաշխի, Առժողկոմատի, Լիթեֆ-ի, ովիոներ. կազմակերպության, Բան-գեղջրաժնի, կոռպերացիայի և այլ կազմակերպությունների կողմից։ Արշավի խնդիրներով կղբաղվին մեր մամուլը, քաղլուսվարական մասսայական հիմնարկները, արդյունաբերական բջիջները, մեր ակումբները, ուղիոն, մանկավարժական դպրոցները, կոլտնտեսությունները։

Կենտրոնական Շտաբը, վոր իր մեջ համախմբել և 40-ից ավելի ներկայացուցիչներ, զեկավարելու յև արշավը տեղական շտաբների և լուսրաժինների միջոցով, ըստ ամենայնի աջակցելով սրանց և դրսեսընկով տեղերի փորձն ու հաջողությունները կենտրոնաբն, ընտրելով հարվածային կետեր, առաջին հերթին իր ուշադրությունը նրանց վրա յև կենտրոնացնելու, վոր-

պեսղի արդյունաբերական ձեռնարկությունները (գործարան, գեղար) և համայնացրած ուժեղ տնտեսությունները (կոլտնտեսություն, սովխողներ և այլն) վերածվեն կայուն հենակետերի (օպօրհոյե ճազե):

Արշավի ծավալումը տեղերում հրատապ խնդիր եւ նախադպրոցական արշամին ոգնության եւ գալիս գործարանին, կոլխոզին ու սովխողին, վորոնք մտել են սոց. մըրցության մեջ:

Արշավի գծով ծավալվող բոլոր ձեռնարկությունները պահանջում են լարվածություն տեղական և հասարակական բյուջեներից, ուստի և անհրաժեշտ ե լայն չափով ոգտագործել բյուջետա-պլանավիճն կամպանիան, նախադպրոցական շինարարության կարեոր տեղ տալով թե լուսբաժինների և թե տնտեսական, պրոֆեսիոնալ, հասարակական ու կոռպերատիվ կազմակերպությունների բյուջեներում, ինչպես վորոշել և Անդրկենտգործկոմը 1928թ. ամառը:

Այս նպատակով պետք է ոգտագործել հասարակական-քաղաքական կամպանիաները, համագումարներն ու խորհրդակցու-

թյունները, սղատգամավորուհիների վերընտրությունները, վերապատրաստության դասընթացները և այլն:

Լուսբաժինները, իրենց նախաձեռնությամբ կամ ոգտագործելով մասսայական կազմակերպությունների (կին-բաժին, ԼկթեՄ, պրոֆմիություն) նախաձեռնությունը՝ համախմբում են իրենց շուրջ այդ հասարակայնությունը և համապատասխան ուղղություն են տալիս նրան:

Տեղերում նախաղպրոց. արշավը ծրագրելիս չպետք է մոռանալ հետելալը.

Նախադպրո. արշավն եպիզոդիկ կամպունիտ չե, այլ հանդիսանում ե աշխատանքի նոր ու տևական մեթոդ, վոր հիմնվում ե հասարակական նախաձեռնության մաքսիմալ ներդրավման վրա՝ նախադպրո. ցանցի ինտենսիվ ծավալման նպատակով:

Տեղական պլանների հիմքում պետք է դրվի կենտր. Շտարի պլանը, առավելագույն չափով կոնկրետացնելով այն ու մանրամասնությունները տեղական պալմաններին հարմարեցնելով: Անհրաժեշտ ե ճշգրտորեն վորոշել բոլոր ձեռնարկությունները, ապահովելով աշխատանքի բաշխումն ու իրա-

ցումն Շտարի անդամների մեջ։ Ցանցի ծավալումը չի անդրադառնալու աշխատանքի վորակի վրա, ուստի և կարեոր տեղ են դրավելու կազրերի պատրաստման, ղեկավարության, աշխատանքների ստուգման ու պրտկարիկ ոգնության խնդիրները։ Այս անհրաժեշտ ե - թե նախադպրոց, գործի և թե արշավի նշանակությունն ու հեղինակությունը բարձր պահելու համար։

Յուրաքանչյուր գործարան, կոլխոզ ու սովխոզ, խոշոր քնակմիություն կամ արտել կարող ե ունենալ արեալին աջակցող խմբակներ, վոր սովորաբար կազմակերպվում ե կին-ակտիվի, ԼԿՅԵՄ բջիջի, տեղ-կոմի և ուրիշների նախաձեռնությամբ, կապվելով մոռակա շրջնանձնաժողովի կամ դաշտաբի հետ Աջակցող խմբակների միջոցով հեշտ ե շահագրգուել ու տրամադրել լայն մասսաներին։

Արշավի աշխատանքների ընթացքում շտաբն առաջին հերթին վերանայում ե գույություն ունեցող ցանցը, տեղական աշխատավորության (հատկապես՝ աշխատավորուհու) ոլանջներին ցանցը և հիմնարկները հարմարեցնելու նպատակով։ Այստեղ

անխուսափելիորեն առաջ են դալիս յերկարատե աշխատանքի որվա (7—8 ժամ), ժամերի դասավորման, դիշերային խմբակների, մանկական սենյակների և այլ նման խնդիրներ:

Արշավը չի կարող անտես առնել անկազմակերպ յերեխաներին: Հերթական խնդիր ե դառնում եքսկուրսիաներ, խաղեր, բարձր ընթերցանություն և այլ մասսայական զբաղմունքներ կազմակերպել մանուկների համախմբման վայրերում — հրապարակներում ու պուրակներում, բանվորական հանրակացարաններում, ընակերութերում, մեծ բակերում և այլն:

Անհրաժեշտ է նաև ընդգրկել յերեխայի առողջացման և մանկավարժական միջավայրի կազմակերպման խնդիրներն ընտանիքում: Այստեղ առաջանում ե մանկական ճաշարանների, զվարճատեղիների, խաղալիքների, հագուստի, ամանեղենի, կահույքի, մանկական զրքի մասսայական արտադրության, սրանց եժանացման ու ուղիոնալացման խնդիրները: Պետք ե պարզարել առանձին անկողնի, ամանեղենի, ընակարանում մանկական սենյակի ու մանկ-

անկյան համար։ Պետք եւ վերացնել ծեծն  
ու կոպտությունը, պատիժները, հայհո-  
յանքն ու հարբեցողությունը, հալածել մա-  
նուկներին թունավորող սնահավատություն-  
ները։

Նախադպրոց։ արշավին մեծ աջակցու-  
թյուն կարող են ցուց տալ մանկավարժական  
հիմնարկները, հատկապես մանկապարտեզ-  
ները՝ թե շտաբի որգաններում և թե կադ-  
րերի պատրաստման ու նոր բացվող հիմ-  
նարկների ղեկավարման — ոգնության (շե-  
ֆության կարգով) ուղղությամբ։

Նախադպրոց։ արշավը հասարակական  
շարժման բնույթ եւ ստանում։ անշուշտ նա  
մեծ արդյունքներ կունենա, յեթե ապա-  
հովվի մասսաների ներգրավումն ու կազ-  
մակերպված ղեկավարությունը։ Արշավը  
սկսում ե նախադպրոց, գործի զարդարման  
ռեալ հնարավորություններ ու լայն հեռա-  
նկարներ։

## ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՐՇԱՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊ- ՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

1. Նախադպրոցական արշավի նպատակն է նախադպրոցական տարիքի յերեխաների մաքսիմալ ընդգրկումն մանկհիմնարկներում, առաջին հերթին  $100^{\circ}/\text{o}$ -ով ընդգրկել սոցիալիստական մրցման մասնակցող բանվորների, կոլխոզների և սովխոզների անդամների մերեխաներին, միաժամանակ պրոլետարական լայն հասարակականության ուշադրությունը կենտրոնացնելով նախադպրոցական յերեխայի կենցաղի բարելավման և իրավունքների պաշտպանության վրա:

2. Նախադպրոցական արշավը չպետք է համարել եպիզոդիկ (ժամանակավոր) միջոց, այլ յերկարատև աշխատանքի նոր մեթոդ, վորի նպատակն է, հասարակականության ու բնակչության ներգրավման միջոցով, առավելագույն արդյունքների հասնել նախադպրոցական հիմնարկների ծավալման գործում:

3. Այս նկատառութերով պետք է ոկզրից և երթ կազմել արշավն անցկացնելու վորոշակի պլան, ուշադրությունը կենտրոնացնելով սպասարկման հարվածային ընագավառների վրա (զործարան, տռանձին կոլխոզներ ու սովխոզներ): Արդյունաբերական վայրերում առաջին հերթին պետք է ծանրանալ այն զործարանների վրա, ուր գերիշխում ե կանանց աշխատանքը և ուր սահմանված ե 2 և ավելի հերթի աշխատանք:

4. Արշավի ընթացքում նախադպրոցական հիմնարկների լայն ծավալումն առավելագույն ուշադրություն և ղեկավարություն ե պահանջում ինչպես կուսֆողկոմատի, նույնպես և տեղերում՝ լուսբաժինների կողմից, վորով հնարավոր կլինի վորոշ բարձրության վրա պահել արշավի ընթացքում կազմակերպվող հիմնարկների մանկավարժական աշխատանքների վորակը:

5. Արշավի կազմակերպման գործում ցանկալի յե աշխատավոր բնակչության լայն խավերի մասնակցությունը, — կուսակցական, խորհրդալին, պրոֆմիութենական և այլ հասարակական կազմակերպություն-

նեղի գծով (կինը աժիններ, կոմիերիտմիություն, պիոններ կազմակերպություն, «Մանուկների բարեկամ» ընկ. և այլն):

### Եյութական-Փինանսական բազայի կազմակերպումը

6. Նյութական-Փինանսական բազայի կազմակերպման համար կարելի յե դիմել հետեւյալ միջոցներին.

ա) Յե կենտրոնում և թե տեղերում կարելի յե արշավի ոգտին ստեղծել խրախուսող ֆոնդեր (Լուսժողկոմատին, ՀԱՄԽ-ին, միությունների կենտրալիզություններին, կոլխոզինտրոնին և նրա տեղական որդաններին կից).

բ) կարելի յե կազմակերպել շաբաթությակներ, վիճակախաղ, յերեկույթներ ու ցերեկույթներ, ներկայացում, կինո-սեանս և այլ միջոցներ՝ իրեն Փինանսավորման աղբյուր:

գ) բնակչության միջոցների ներդրավում (դրամով, գուտքով, մթերքներով).

դ) դպրոցական և պիոններական արհեստանոցների, արտելների և իրենց ձնողների մասնակցությունը՝ նախադպրոցական

հիմնարկների համար գույք, խաղալիքներ  
ու պիտույքներ պատրաստելու գործում.

գ) անպետք նյութի (բրօսովայ նա-  
териալ)՝ մատիտների, փայտի կտորտանք-  
ների, թղթի ու լաթի, տուփերի և այլն՝  
հավաքելը — նախադպրոցական հիմնարկնե-  
րում ոգտագործելու նպատակով. Նյութի  
կուտակման վայրեր կարող են ծառայել  
գործարանները, տպարանները, արհեստա-  
նոցները, խանութները և այլն.

հ) ցերեկն ազատ հասարակական շեն-  
քերը (ակումբ, կարմիր անկյուն, խրճիթ-  
ընթերցարտն, կինո, թատրոն, գործար-  
կոմիների սենյակներ և այլն) կարող են  
տրամադրվել նախադպրոցական հիմնարկ-  
ներին՝ ոգտագործելու նպատակով. ամառը  
նույն նպատակին կարող են ծառայել այ-  
դիները, պուրտկները, մեծ բակերը, դպրո-  
ցական ազատ շենքերը և այլն:

### Պօխատանիթի ձեվերը

7. Նախադպր. արշավի պայմաններում  
պետք է ոգտագործել նախադպր. աշխա-  
տանքների բոլոր հնարավորություններն ու  
ձևերը.

ա) ըստ այս կամ այն վայրի պայմանների պետք է կազմակերպել մանկապարտեղներ, մանկհրապարակներ, ցերեկվակամ յերեկոյան սենյակներ, բացի այս անհրաժեշտ է կազմակերպել աշխատանքներ յերեխանների կուտակման վայրերում՝ բանվորական հանրակացարաններում, բնակարանային ընկերություններում, այդինքը պայմանագրում և այլն։ Պետք է սպառագործել մասսայական աշխատանքի բաղմաղան ձեւը՝ եքսկուրսիաներ, մասսայական խողեր ու ընթերցանություն, բնմադրություններ և այլն. բերքի հավաքման շրջանում կարելի յերբիզադներ ուղարկել կուտնասությունները՝ նախադպրոցական վայրերում կազմակերպելու նպատակով.

բ) գոյություն ունեցող նախադպրոցների պետք է հարմարեցնել աշխատավոր բնակչության պահանջներին. դորժարանային ռայոններում մանկապարտեղները պետք է վերածվեն մանկոջախների՝ յերկարատև աշխատանքի որով. ոջախներն անցնելու յին 2-3 հերթի աշխատանքների՝ համաձայնեցնելով այն դորժարաննի հերթերի հետ։ Մանկհիմնարկնե-

բում և բանվորական հանրակացարաններում պետք է կազմակերպել զիշերային խմբակներ 7. ժամայա աշխատանքի անցած բանվորուհիներին սպասավորելու նպատակով.

գ) բացի հասարակական դաստիարակության վերոհիշյալ ձեռը, պետք է մի շարք միջոցներ ձեռնարկել յերեխայի կյանքն ընտանիքում բարելավելու նպատակով. մանկական գիետիկ ճաշարանների կազմակերպությունների գոնե Յերեանում և Լենինականում, մանկական կահույքի, հազուստի և խաղալիքների մասսայական արտադրության եժանացումն. հասարակական կամպանիա անցկացնել յերեխաններին պատճելու, հարրեցնելու, կրոնական ծեսերին մասնակից անելու, ինչպես նաև ծնողների հարբեցողության, հայնոյանքների ու կոպտությունների վեմ. տարրական առողջապահական ունակությունների ագիտացիա (յերեխային տալ առանձին անկողին, ամանեղեն, սպիտակեղեն, սենյակում ունենալ մանկական անկյուն և այլն). ակումբներին, խրճիթ-ընթերցարաններին ու հանրակացարաններին կից կազմակերպել կոն-

սուլտացիաներ՝ յերեխայի կանոնավոր դաստիարակության խնդիրների վերաբերմամբ։ անհրաժեշտ է նաև աշխատավոր քնակչության կոռպերացման կամպանիան անցկացնել՝ նախադարձոցական ձեռնարկություններ կազմակերպելու նպատակով (ընդհանուր սենյակ, պիտույքներ, հերթապահություն, սննդի կազմակերպումն և այլն):

### Ա. ԵԽԱՏԱԿԻԳՑԵՐԻ պատրաստելը

8. Յերեխաների հետ աշխատանք տանելու նպատակով (իբրև «զեկավարներ») կամավոր մոքիլիզացիալի գծով կարող են հրավիրվել մանֆակուլտետի, մանկավարժությանիկումների, և աստիճանի դպրոցների աշակերտներն ու կինակտիվը, պիտներ աշխատակիցները, «Մանուկների բարեկամ» ընկերության անդամները և այլն։ Դպրոցներում ցանկալի յե ստցնել նախադարձոցական դիտելիքների ցիկլ կամ կազմակերպել «Նախադարձոցական դաստիարակության խմբակ», իսկ այն աշխատակիցների համար, վորոնք բոլորովին անծանոթ են գործին, կազմակերպել 14-որյա կուրս-պրակտիկում։ Մեթոդական զեկավարության հա-

մար կարելի յե հըավիրել նախադպրոցական աշխատավորներին, մանկավ. դպրոցների դասատուներին, բժիշկներին և այլն:

**Ըստատանքի կազմակերպումն ու ղեկավարությունը**

9. Նախադպրոց. արշավի ամբողջ աշխատանքը կազմակերպելու և ղեկավարելու համար կենտրոնում կազմակերպվում եւ առօսվի օտարք: Շտաբի կազմի մեջ մտնում են ՀԿ (բ) կ կե, ԷԿՅԵՄ, պիոներ, կազմ. կենտր. բյուրոյի, ՀՍՄԽ-ի կուլտրաժնի, մի շաբք միությունների, Լուսժողովականի, Առժողկոմատի, Լուսաշխի կենտր. վարչության, կոռուպերացիայի բոլոր ճյուղերի, կենտրոնակոմին կից կանանց կենցաղը բարելավող հանձնաժողովի, կոլտնտկենտրոնի, խոշոր արդյունաբերական ձեռնարկների, տեղական նախադպրոցականների, «Մանուկ» ների բարեկամք և հասարակական այլ կազմակերպությունների ներկայացուցիչները: Ընթացիկ աշխատանքը ղեկավարելու համար ընտրվում եւ շտաբի գործող ապահովատը՝ պրեզիդիում կամ խորհուրդ: Շտաբը կարող եւ ոգտագործել տեղական մամուլը

կամ իր բլուլետենն ունենալ, վորը հրապարակում և փորձերի արդյունքներն ու այդպիսով բգնում աշխատանքներին։ Տեղերում, բացի շտաբից, կազմակերպվում են արշավին աջակցող խմբակներ խոշոր կուխողներում, սովորողներում, ձեռնարկություններում և բնակ-վարձակալ։ Ընկերություններում։ Տեղական շտաբները կարող են ունենալ հետեւյալ հանձնաժողովները՝ կազմակերպչական-ֆինանսական, մեթոդական և ազիտացիոն-պրոպագանդիստական։ Հանձնաժողովների աշխատանքները մոտավորապես հետեւյան են.

1. Կազմակերպչական—միջոցների ըստեղծելն ու հալթայթելը, նախագպրոցական սարիքի լերեխաների հաշվառումն (արշավի ուսունում), ազատ շենքերի հաշվառումն, կադրերի մորիլիզացիա և բաշխումն։ Աջակցություն մյուս հանձնաժողովներին կազմակերպչական աշխատանքներում (գրականության բաշխում, հրատարակչական աշխատանք և այլն):

2. Մերսպական—արշավի աշխատանքի ձևերի մշակումն ըստ տեղական պայմանների։ հասարակական աշխատավորներ

պատրաստող կուրսերի և պրակտիկումների կազմակերպութիւն, բազալին հիմնարկներ ստեղծելն ու զեկավարելը, մեթոդիստների — հրահանգիչների խմբակների կազմակերպումն, շեֆության սահմանում (նոր հիմնարկների), մասսայական գրականություն, կոչերի, մեթոդական նյութերի ընտրություն՝ բնակչության և աշխատակիցների համար, արշավի ընթացքում կազմակերպված հիմնարկների հետազոտումն՝ աշխատանքների գրությունը պարզելու և աշխատակիցներին անմիջական մեթոդական ոգնություն ցույց տալու համար:

3. Ազիտացիոն-պրոպագանդիստական — արշավին նվիրված մասսայական յելույթների կազմակերպութիւններում գործարաններում, կոլխոզներում և սովխոզներում: Կենտրոնական և տեղական մամուլում արշավի խնդիրների պարբերական պարզաբանումն: Մասսայական ազիտ-յելույթների (ազիտդատ, բեմադրություն և ալլն) կազմակերպումն յերեխայի դաստիարակության խընդիրների շուրջը:

10. Նախադպր. արշավին աջակցող խընդիրները կազմակերպվում են կին պատգա-

մավորուհիների, ԱկծեՄ, «Մանուկների բարեկամ» և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների նախաձեռնությամբ: Խըմբակների առաջին անելիքն և՝ պարզել տըմբալ ձեռնարկության կից նախադպրոցականների (յերեխաների) վիճակը: Ամբողջ ձեռնարկություններին ակտիվ աշխատանքներում ներգրավելու համար խորակը կազմակերպում ելելութներ, պատի լրագիր և այլն:

11. Արշավի սկիզբը հայտարարվում է նոյեմբերի 1—8 (Հոկտ. հեղափոխության տարեդարձին հարմարեցրած): Մարտի 6, 7 և 8-ին հայտարարվում է «Հոկտեմբերիկ» յեռորյակ, վորի ընթացքում հաշվի յեն տոնըլում արշավի առաջին շրջանի արդյունքները, իրեն ոգնության մի միջոց բանվորուհուն և գեղջկուհուն սոցիալիստական շինարարության գործում ներգրավելու և նախադպրության արշավի կազմակերպման հետագա անելիքները նշելու:

## ԹԵԶԻՍՆԵՐ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՐՇԱՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Մեր յերկը ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման

պայմաններում որեցոր աճում և նոր կաղը բերի պահանջը. արդյունաբերության և ընդհանրապես ժողովրդ. տնտեսության բոլոր ճյուղերը պահանջ են դնում նոր կագրերի, նոր մարդու, վոր տոգորված և լինելու նոր՝ կոմմունիստական տնտեսություն ստեղծելու վոգով։

2. Նախադպրոցական դաստիարակությունը, հանդիսանալով «սոցիալիստական շինարարության մասնիկներից մեկը», այդպիսի նոր մարդ դաստիարակելու աշխատանքների հիմքն և հանդիսանում, ստեղծելով փոխարինողների մի սերունդ, վորը համակված կլինի աշխատավորության շահերով, կպաշտպանի հեղափոխության նվաճումները և ընդունակ կլինի կոլլեկտիվ կերպով կառուցել կոմմունիստական հասարակակարգ։

3. Ցերկրի ինդուստրիացումը, վորի հետևանքով աճում և բանվորական ուժը, և ավելի անհրաժեշտ և դարձնում ուժեղացնել մեր աշխատանքների թափը նախադպրոցական դործի բնագավառում, ընդլայնելով ցանցը մեր տնտեսության հարվածային բնագավառներում՝ արդյունաբերական և

գործարանային շրջաններում և, առաջին հերթին, այն վայրերում, ուր կանանց զգալի տոկոսն զբաղված և արդյունարեցության մեջ:

4. Մյուս կողմից պյուղի տնտեսական պայմաններն ու պահանջները, պյուղացիության, հատկապես գեղջկուհու, կուլտուրական պահանջների աճումը, կոլխոզների ու սովխոզների համայնացրած տնտեսությունները,—այս բոլորն անհրաժեշտ են դարձնում նախադպրոցական դաստիարակության մասսայականացումը գյուղում:

5. Այսպիսով նախադպրոց, դաստիարակությունը, ազատագրելով աշխատավորմությունը՝ բանվորուհուն ու գեղջկուհուն յերեխանների հոգսից, բարձրացնում է կնոջ աշխատանքի արտադրողականությունը և հնարավորությունն է տալիս նրան մասնակցել յերկրի շինարարության գործում (տես Համեկոմկուսի (Բ) Կենտկոմի վորոշումն այս առթիվ):

Հետեապես նախադպրոցական դասխառակությունը նպաստում է կուսակցության յեկնորենդային Միության առաջ դրված ընդհանուր խնդիրների լուծման:

6. Պետք է հաշվի առնել նաև այն ծանր պայմանները, վորոնց մեջ ապրում է մեր նախադպրոցականների մեծագույն մասն ընտանիքում (բնակարանի նեղվածք, խոնավություն, բավարար լուսի և ողի բացակայություն, անբավարար սնունդ և անկազմակերպ դաստիարակչ. միջավայր), վորոնց հետեանքով փաստորեն գոյություն ունի մասսայական խնամազրկություն՝ խեղաթյուրված դաստիարակությամբ և հաճախակի պատահարներով։ Այս հանգամանքներն առաջացնում են վատառողջ սերունդ (թուլակազմ, սակավարյուն, թուլլ թոքերով, նեվրաստենիկ, փչացած ատամներով և այլն) և անհրաժեշտորեն դնում են յերեխաների առողջացման հրամաքական պահանջն՝ ընդդրկելու նրանց կազմակերպված մանկհիմնարկներում։

7. Վերջին տարիները նկատելի յեն վորոշվաճումներ նախադպրոցական գործում. բյուջեներում աճում են նախադպրոցական դաստիարակության հիմնարկների հատկացումները, զգալի կերպով նկատելի յե հասարակական կազմակերպությունների աջակցությունն ու մասնակցությունը (հատ-

կապես կին կաղմակերպությունների և կոռպերացիայի), աննախընթաց կերպով աճում է մանկհրապարակների ցանցը (1925 թ. 4 հրապարակների դիմաց սույն 29 թ. ամառը Հայաստանում յեղել և 200-ից ավելի, Ռուսաստանում նույն տարիները հրապարակների թիվը 300-ից բարձրացել և 7-8 հազարի). աշխատավորության խմբակցությունները, ոլորֆմիությունները, կոռպերացիան, կոլտնտեսությունները և այլն պահանջ են դնում և հաճախ իրենց նախաձեռնությամբ ու աջակցությամբ նպաստում են նախադպրոցական գործի շինարարության:

8. Սակայն, չնայած այս նվաճումներին, նախադպրոցական գործը մեղ մոտ գեռևս խոշոր բացեր ունի.

ա) արդյունաբերական ձեռնարկներին կից մեծ մասամբ չկան մանկապարտեզներ, յեղածներն ել աշխատանքի կարճատեսք վա պատճառով լրիվ չափով չեն սպասավորում բանվորների վերեխաներին. զիշերակին հերթերը բոլորովին գոյություն չունեն.

բ) թե սեզոնալին և թե ստացիոնալ (մշտական) հիմնարկներում աշխատանքի

որը չափաղանց կարճ և տեռում (3-5 ժամ), մանկական հրապարակների չնչին տոկոսն և աշխատում 6 ժամ, մինչդեռ ամառային աշխատանքների բնույթը հաճախ անհրաժեշտ և դարձնում 10—12-ժամյա որը.

գ) ազգինքը բամասնությունների յերեխանների չնչին տոկոսն են ընդորեկում նախադպրոց. հիմնարկները, հատկապես մանկապարտեզները (միայն 2-3 մանկացեղ).

դ) աշխատակիցների անբավարար կադրը. Հայաստանում գոյություն ունի լատ. դպրոցներին կից միայն 2-3 նախադպր. խմբակ, մանֆակը և մանկականիկումները չունեն նախադպր. բաժիններ, նույնիսկ նախադպր. գիտելիքների հատուկ դիսցիպլին իրենց ծրագրերում.

ե) վերապատրաստության միջոցները թույլ են, պատահական. համագումարներն ու կոնֆերանսները յեղակի բնույթ են կրում. գոյություն չունեն կենտրոնական բազալին հիմնարկներ և գիտական մեթոդական կենտրոններ.

զ) զեկավարությունը թույլ և թե տեղերում և թե կենտրոնում վերոհիշյալ հիմնարկների, մասնագիտական գրականու-

թյան (հալերեն), գործուղղումների և այլ  
սիջոցների բացակայության պատճառով:

Է) քիչ թե շատ տանելի շենքերի, ան-  
հրաժեշտ կահավորության և պիտույքների  
(դիգակտիկ նյութ, մանկ. գրականություն,  
կառուցողական նյութ և այլն) բացակայու-  
թիունը, հիմնարկների առողջապահական-  
սանիտարական անբավարար վիճակը, աղ-  
քատիկ ու պատահական բյուջեները,—այս  
բոլորը մեծ չափով խանգարում են նախա-  
դպրոցական դաստիարակության կանոնա-  
վոր զարգացման գործին:

Զ. Զնայած նախադպրոց, ցանցի նկա-  
տելի լայնացման (8—80 հիմնարկ 1920—  
29 տ. ընթացքում), այնուամենայնիվ նա-  
խադպրոց, գործի զարգացումն անհամաշ-  
փորեն յետ է մնացել յերկրի Տնտեսական ու  
կուլտուրական ընդհանուր զարգացումից:  
Մենք հնարավորություն չունենք ընդգրկել  
լերեխաների գոնե բավարար տոկոսը մեր  
հիմնարկներում. ներկայումս Հայտստանում  
նախադպրոց, հիմնարկներն ընդգրկում են  
այդ տարիքի լերեխաների մոտ 3 տոկոսը  
(Խուսաստանում 0,58 տոկ.), հնգամյակի  
վերջում նախատեսվում ե ընդգրկել 6 տո-

կոս (Բուռաստանում 1,5 տոկ.): Յուրաքանչյուր տարի մեր հիմնարկներից դուրս ե մնում դիմողների 50—300 տոկ., ամեն աշնան սկզբին մեր նախադպր. հիմնարկներում լարված պալքար ե տեղի ունենում աղատ տեղերի համար, և կազմակերպված բնակչությունը հարց ե դնում ամենուրեք լայնացնել ցանցը:

10. Այս բոլորն ապացուցում ե, վոր, թեկուզ և բյուջելի սխտեմատիկ աճումով, պետությունն ի վիճակի չե բավարար չափով ապահովել անհրաժեշտ ցանցը, վոր նախադպրոց. գործն ապահովելու համար անհրաժեշտ ե լայն չափով ոգտագործել հասարակական ուժերն ու միջոցները, վոր անհրաժեշտ ե նաև բացառիկ միջոցների զիմելը:

Ահա այսպիսի միջոցներից մեկն ե նախադպրոցական արշակը, վոր ձեռնարկել են լուսժողկոմատը և կոմկուսակցական ու հասարակական մի շարք կազմակերպություններ, և վորի նպատակն ե՝ ա) աշխատավորության լերեխաների մաքսիմալ ընդգրկումն նախադպրոցական հիմնարկներում, բ) այդ հիմնարկների անտեսական-առողջա-

ալահական դրության և մանկավարժական աշխատանքի բարելավումն, գ) դաստիարակչական-մանկավարժական աշխատանք բընակչության մեջ և յերեխայի իրավունքների պաշտպանություն ու կենցաղի առողջացումն ընտանիքներում:

11. Նախագաղբոց. արշավե այս նպատակներն իրականացնելու համար, հաշվի տունելով տեղական պայմանների առանձնահատկություններն ու պահանջները, զարկ և տալու հետեւալ տիպերի հիմնարկների կազմակերպման ու ծավալման.

ա) Գործարանային ուայոններում և համայնացրած տնտեսություններում առաջին հերթին, վորտեղ վերակշռում և կանացի բանվորական ուժը, բաց անել տեհական մանկապարտեզ-ոջախներ: Աշխատանքի տեսողությունն այս հիմնարկներում սահմանվում և տվյալ ձեռնարկի աշխատանքի պայմանների առանձնահատկությունների համաձայն (8—10 ժամ): Ոչախն առավելապես սպասարկում և բանվորուհի-մոր կարիքներն, ազատելով նրան յերեխաների հոգսից արտադրական աշխատանքի ընթացքում: Վերոհիշյալ վայրերի համար յե-

լակետ ընդունելով մանկոջախը, պետք  
ձգտել—

կազմակերպել նոր ոջախներ կամ խըմ-  
բակներ այդ ձեռնարկություններին կից.

միջոցներ գտնել մանկապարտեզների  
աշխատանքները տեսական դարձնելու հա-  
մար (7—8 ժամ)։

7-ժամյա աշխատանքի անցնող ձեռ-  
նարկություններին կից կազմակերպել մը-  
սութներ ու մանկապարտեզներ՝ դիշերային  
հերթերով։

ոջախներին կից կազմակերպել յերեխատ-  
ների համար յերեկոյան խմբակներ, վորով  
դյուրություն կտրվի մալրերին հասարա-  
կական աշխատանքներով դրադվելու։

Դիշերային հերթեր ունեցող ձեռնարկու-  
թյուններին կից կազմակերպել յերեխատնե-  
րի գիշերային խմբակներ՝ մալրերի աշխա-  
տանքն արտադրության մեջ չխանգարելու  
նպատակով։ (Աշխատանքի անընդհատ շա-  
բաթվա անցնելու դեպքում մանկիրապա-  
րակները պետք ե հարմարվեն յեղած պա-  
հանջներին)։

բ) Այնպիսի բանվորական վալրերում  
կամ շրջաններում, ուր մալրերի մեծ մասը

տնային տնտեսուհիներ են, ինչպես նաև գյուղատնտեսական աշխատանքի վայրերում (ձմեռը) կազմակերպել 6-ժամյա տեսդությամբ մասնկապարտեզներ:

դ) Այն վայրերում, ուր չկան նյութական նախադրյալներ, և գոյություն ունի շենքերի կրիզիս, վորով անհնար և դանում բանալ մանկոջախ կամ նորմալ մանկապարտեղ, պետք և կազմակերպել մասնկապարտեզ-պրիմիտիվ։ Այսպիսի միակունողեկտանի մանկապարտեզը կարող է բավարարվել 2, նույնիսկ մեկ սենյակով\*), 25—30 յերեխաների ճետ՝ առանց պարտադիր խմբավորման կարող և աշխատել մեկ զեկավար, յեթև հասարակական աշխատանքի գծով նրան ոգնականներ տրամադրված։

Կահավորությունը կարելի յե հասցնել մինիմումի, ձեռք բերելով ամենատանհրածեցտ գուէքը։ Այսպիսի պրիմիտիվ կարելի յե կազմակերպել բնակընկերություններում, բանվորական հանրակացարաններում, ակումբներին, ընդարձակ խրճիթ-ընթերցարաններին կից և այլն։

\* ) Յեթև միայն սենյակի մակերեսն ու ողի ծագալը (կուբատուրա) բավարար են։

դ) Ամառը, յերբ յերեխաների անխնամությունն ավելի զգալի յե դառնում, պետք է լայն կերպով ծավալել մանկական հրապարակների ցանցը թե քաղաքում և թե գյուղում (գործարաններին, կոլտնտեսություններին կից, տնայնագործական շըրջաններում և այլն): Հրապարակն (մասսացական) ինքնին պրիմիտիվ հիմնարկ և մեծ ծախսեր չի պահանջում: Անհրաժեշտ ե միայն, վոր ունենա հարմար տեղադրություն (փոշուց, աղմուկից, աղբակուլտերից հեռու), մաքուր, տափարակ, հովտուն տարածություն: Քաղաքներում այս նպատակին կարող են ծառայել պուրակները, այգիները, ընդարձակ բակերը և այլն: Շենքը (թեկուզ մեկ սենյակ) անհրաժեշտ ե միայն զուգքը պահպանելու և վատ յեղանակներին աշխատելու համար: Սրա համար միանգամայն բավարար են ակումբների, խրճիթ-ընթերցարանների սենյակները, վորոնք ցերեկներն ազատ են լինում, տաղավարները (բեսեդիա) և դպրոցական դատարկ շենքերը: Ծայրահեղ դեպքում կաըելի լեռ ոդուագործել մեծ բակերը և առաջարակ ազատ տարածությունները, յեթե վորեն ծածկ շինվի:

ե) Հրապարակում որվա տեղությունը սահմանվում է ըստ յերեխաների ծնողների աշխատանքի՝ պայմանների՝ քաղաքում 6—8 ժամ, գյուղում 10—12 ժամ (դեկտիվաբների հերթափոխությամբ): Ըստ պայմանների ու պահանջի կարող են խառն նրապարակներ լինել—դպրոցականների ու նախադպրոցականների կամ մասնակարակ, սակայն յերկու դեմքում ել նախադպրոցական յերեխաները (4—7 տ.) առանձին խումբ են կազմելու:

զ) Վերջերս առաջացել ե մի նոր տիպի հիմնարկ՝ տեական և ձմեռային նրապարակ կամ բաց-մանկապարտեզ (որինակ՝ Յերեանի ԱԶՈՒ): Այս հիմնարկներում աշխատանքը տարվում է զլխավորապես բացոթյար վոր նպաստում ե յերեխաների առողջացման, յեթե, իհարկե, բացոթյա ռեժիմն անսպաստ կլիմայական պայմաններում՝ ծացրահեղության չի հասնում: Ռւսի և ամենուրեք, ուր բնակարանային կրիզիսն անհնար ե գարձնում պրիմիտիվ մանկապարտեղը, պետք ե կազմակերպել ձմեռային հրապարակ: Այստեղ ևս կարելի չե ոգտագործել պուրակները, այդիները, բակերը և

այլն. շենքն անհրաժեշտ և գույքի պահպանության համար և պետք և հարմարեցվի յերեխանութիւն (սեղանատուն) և հնարավորություն տա տաքանալու:

Է.) Ակումբներին, հանրակացարաններին, ընակընկերություններին կից կտզմակերպվում են նախադպրոցական յերեկոյան սենյակներ, վորոնք հնարավորություն են տալիս մայրերին յերեկոյան ժամերին զբաղվել հասարակական և կուլտ-կրթական աշխատանքներով: Այս սենյակները գործում են որական 3—4 ժամ, ժողովորապես յերեկոյան 6—10 ժ.: Յերեխաների կազմը հոսում և լինում (փոփոխական): Հատուկ աշխատակից չունենալու դեպքում կարելի յերավականանալ մայրերի կամ քույրերի հերթապահությունը:

12. Բացի վերոհիշյալ հազմակերպված հիմնարկներից կարելի յե պարապմունքներ կազմակերպել նաև վերոհիշյալ հիմնարկներից դուրս մնացած անկազմակերպ յերեխաների հետ, սրանց կուտակման վայրերում—զբոսատեղերում, բնտկընկերություններին կից, մեծ բակերում և այլն: Այս ըանի համար՝ հասարակական աշխատանքի

կարգով՝ պետք և մայրերի ու հասարակական աշխատավորների (կին պատգամավորուհի, կոմյերիտական, պիոններ, «Մանուկների բարեկամ» ընկ. անդամներ, բարձր խմբերի աշակերտներ և այլն) հերթապահությունն սահմաննել հիշյալ վայրերում:

13. Խնկատի ունենալով նախադպրոցակցանցի նվազ ընդդրկումը և յերեխայի կենցաղի աննպաստ պայմաններն ընտանիքում ու մոր ծանրաբեռնվածությունը, անհրաժեշտ և դառնում նախադպրոցական դաստիարակության մասսայականացման միջոցներից մեկը՝ մանկավարժական-առողջապահական կանուլէտացիան. այս նպատակի համար պետք և ոգտագործել առժողկոմատի կոնսուլտացիաները («մայրերի ու մանուկների»), դպրոցական և նախադպրոցական հաստատությունները: Կոնսուլտացիալում նշանակվում են հերթապահ մանկավարժներ ու բժիշկներ, վորոնք ընդունում են յուրաքանչյուր մոր, յուրաքանչյուր քաղաքացու, վոր կարիք և զգում մանկավարժական-առողջապահական ցուցմունքների ու խորհուրդների, յերեխայի կանոնավոր դարձացման, ոլաշտապահության

ու դաստիարակության նկատմամբ։ Կոնսուլտացիայի աշխատանքների մասսայական մեթոդներն են՝ դասախոսություններ, զրույցներ, մասսայական ցուցահանդեսներ, մայրերի համար դասընթացներ և այլն։

**14. Վերջին նպատակին (նախադպրոցական դաստիարակության մասսայականացումն անկազմակերպ բնակչության մեջ) կարող են ծառայել նաև կոռպերացիալի «Մայր ու մանուկ» խանուքներն ու անկյունները։ Այստեղ ես կարելի լի մեծ աշխատանք կազմակերպել հաճախորդ մայրերի հետ՝ զրույցներ, խորհուրդներ ու ցուցմունքներ տալ վաճառվող իրերի նշանակության, գործածության ձևերի մասին և այլն։ Սրան կից կարելի յե կազմակերպել մայրերի խմբակներ, վորոնց հետ սիստեմատիկ աշխատանքներ տարվում յերեխայի դաստիարակության խնդիրների շուրջը։ «Մոր ու մանկան» շուրջը պետք է համախմբել ըժշկական և մանկավարժական ասպարիզում աշխատողներին, սրանց մասնակցությամբ կազմակերպել զրույցներ, ցուցահանդես, յերեխաների ստուգատես և այլն։ Կարելի լի կազմակերպել մայրերի հետեւալ խմբակները։**

ա) յերեխալի սնունդը, բ) հակուստն ու  
անկողինը, գ) խաղալիքները, դ) առաջին  
ոգնություն, ե) վարակիչ հիվանդություն-  
ներից պաշտպանելու կամ «մանուկների  
մահացության դեմ պարքարող խմբակ» և  
այլն:

---

## ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՑՈՒ- ՑԱՀԱՆԴԵՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

**Ցուցահանգեսի ռեզը**

Քաղաքում—դործար, ակումբում, բանա-  
կումբում, գյուղացու տանը, լուսաշխի ա-  
կումբում, խոշոր բնակկոոպերում, մանկա-  
պարտեզներում, դպրոցներում։

Գյուղում—ժողոանը, խճիթ-ընթերցա-  
րանում, դպրոցում, մանկապարտեզում,  
գյուղատնտ, կոմմունայում, կոլխոզի ակում-  
բում, գյուղխորհրդում։

**Ցուցահանգեսի խնդիրները**

1. Բնակչությանը պարզել նախադպր.  
դաստիարակության նշանակությունը։

2. Ներգրավել հասարակական կազմա-  
կերպությունները նախադպրոցական հիմ-

նարկներ կազմակերպելու և յեղած հիմնարկները պահպանելու գործում:

3. Պարզել նախադպրո. հիմնարկի (և յերեխաների) ազգեցությունն ընտանեկան կենցաղի վրա:

4. Ռգնել ծնողներին՝ դաստիարակչական տարրական խնդիրները լուրացնելում:

5. Պարզել բնակչությանը՝ ինչպես կարելի է բարելավել յերեխայի կյանքն ընտանիքում:

### Յուցահանգեսի իրերը (եքսպոնատները).

1. Հոգունգներ, 2. տախտակներ մակագրություններով, 3. Նկարներ խորադրերով և առանց խորադրերի, 4. ալբոմներ 5. մակետներ ու մոդելներ, 6. ձեռք (վակրոյք), 7. լուսանկարներ, 8. կարտոնից և փաներայից կտրվածքներ, 9. յերեխաների աշխատանքներ, 10. մանկական դուլքի նըմուշներ, խաղալիքներ, պիտուլքներ, 11. գըրականություն (մանկական, բրոշյուրներ, կոչեր), 12. դիապորիտիֆներ:

### Յուցահանգեսի բովանդակությունը

(մուտավոր)

Եքսպոնատները պետք են դասավորել վորոշիմանների կամ լոգունգների շուրջը, որինակ—

1. Մանկապարտեզը յերեխաներին սովորեցնում է տօշխատել —

իր համար՝ հազնվում ե, հանում ե շորերը,  
անկողինն ե շինում, լվացվում ե.

բոլորի համար՝ սեղանն ե փռում, սենյակն ե հավաքում, աման ե լվանում և ալլու:

2. Ամեն մի մայր պետք ե իմանա դասիարակել իր յերեխային. Այս լոգունգի տակ պարզաբանել՝ յերեխայի սնունդը, քունը, հազուստը, անձնական խնամքը, խաղն ու աշխատանքը, մանկական գիրքը, մեծերի որինակը և ալլու. Սննդի բաժնում տալ կանոններ ոննդի մասին, որինակ՝

Կանոնավոր սեունդն ամրացնում է յերեխային, յերեխային կերակրիր վորու ժամերին և ալլու:

Համապատասխան նկարների տակ կարելի յե գըել՝

Վ.ո՛չ մի կարիլ խմիչք.

Կերակուր յեփելիս միօտ նետելիր յերեխայիդ.

3. Խաղը շարուրյուն չե, այլ ոգտակար զբաղմունիք ե յերեխայի համար. Այստեղ կարելի յե ցուցադրել կամ ցուցակուգրել հետևյալ խաղալիքները.

ա) Վճառակար խաղալիքներ — փողեր (փչելու), շվիներ, խմբեղենից, լաթերից շենած տիկնիկներ, ծակող և ներկը դուրս տվող խաղալիքներ:

բ) Քիչ ոգտակար խաղալիքներ — մանր իրեր ու խաղալիքներ, կտցող հավեր, արձանիկներ, անագե զինվորներ. (սրանք ակտիվություն չեն առաջացնում):

գ) Ոգտակար խաղալիքներ — գնդակ, ձիաձող, սահնձ, ողակ (որբուչ), սալլակ, արկղներ, շինարարականն նյութ. (սրանք նպաստում են ստեղծագործելու):

դ) Աղբատիկ ու փոքր սենյակում ել յերեխան իր տեղն ե ունենալու: Այս բաժնում պետք ե ցուցադրել մանկ. անկան կահավորությունը՝ սեղան, աթոռակ, կախարան, դարակ կամ պահարան և այլն՝ համապատասխան չափերով:

ե) Մատչելի աշխատանին անհրաժեշտ ե յերեխային:

Ոգտակար աշխատանիներ — լվանալ թեյի ամանները, սրբել սեղանը, ջրել ծաղիկները և այլն:

Վճառակար աշխատանիներ — ջրհորից ջուր քաշել դույլերով՝ ջուր կրել յերեխային

զրկել, հատակը լվանալ, փայտ կոտորել,  
հեռու տեղ գնալ (կհոգնի) և այլն:

Նույնպիսի պարզաբանություն կարելի  
յե տալ նաև պատիժների, ստելու, զրույցի  
ու պատմելու, հագուստի ու քնի առողջա-  
պահության և այլ հարցերին:

Ցուցահանդես այցելողներին ոլեռք ե  
բացատրել այս խնդիրները. կարելի յե կազ-  
մակերպել զրույց, հարց ու պատասխան և  
այլ մասսայական ու անհատական մեթոդ-  
ներ:

---

## ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ

(Նախադպրոցական արշավի մասին)

Նախադպրոցական արշավի եենտշտաբը  
արշավին նվիրված միացյալ նիստում, մաս-  
նակցությամբ կենտրոնական ու Յերևանի  
կուսակցական, կոմիերիտ., պրոֆ. և հասա-  
րակական կազմակերպությունների ներկա-  
յուցուցիչների, վորոշեց դիմել մեր յերկրի  
բոլոր աշխատավորներին՝ միացյալ ուժերով  
ապահովել աշխատավորության յերեխանների  
նախադպր. դաստիարակության գործը:

Թե ցարական պետությունը և թե նրան  
հաջորդող դաշնակցական կառավարությու-  
նը անտարբեր ելին դեպի նախադպրոցա-  
կան գործը։ Մեծ քաղաքներում գոյություն  
ունեցող հատ ու կենտ մանկապարտեզներն  
սպասարկում ելին ունեորների յերեխաննե-  
րին. լավագույն դեպքում նախադպրոցակ.  
գործը հովանավորում եյին «բարձր դասի»  
ներկայացուցիչներից կազմված ընկերու-  
թյունները։ Նախադպրոցական գործն իր

ջերմ սղաշտապանն ունեցավ հանձինս խոր-  
հըրդային իշխանության, հանդիսանալով ի-  
րոք Հոկտեմբերի նվաճումներից մեկը։ Կարճ  
ժամանակում թե Խորհրդային Միության  
մեջ մտնող այլ հանրապետությունները և  
թե Խորհրդային Հայաստանը ծածկվեցին  
նախադպրոցական մասսայական հիմնարկ-  
ների ցանցով։ Ներկայումս մեզ մոտ նա-  
խադպրոցական հիմնարկների թիվը արդեն  
80—100-ի յե հասնում, ընդգրկելով 3—8 տ.  
լերեխանների մոտ 40%, իսկ այս տեմ-  
պով գնալով, 5-ամյակի վերջում այդ տո-  
կոսը կարող է հասնել 10-ի։ 1925 թ. 4  
մանկական հրապարակների դիմաց այս ա-  
մառ (1929 թ.) մենք ունեցել ենք 200-ից  
ավելի հրապարակներ, սրանց զգալի մասը  
կոլտնտեսություններին կից և կոռպերաց-  
րած բնակչության մեջ։ Անցյալի նկատմամբ  
հաջողությունն անհախընթաց է, իսկ կարի-  
ֆի համեմատությամբ - շատ չնշին է։

Մեր յերկրի 110,000-ի հասնող նախա-  
դպրոցական տարիքի լերեխանների նկատ-  
մամբ վերոհիշյալ թվերն ապացուցում են  
պրոլետարիատի և աշխատավորության զա-  
լուկների մասսայական անխնամություն,

վոր ամենից առաջ մի մեծ խոչընդուռ և աշխատավորուհուն՝ սոցիալիստական շինարարության գործում ակտիվ մասնակցելու համար:

Յելնելով Համկոմկուսի (բ.) կե վորոշումներից բացառիկ նշանակություն և ըստանում բանվորուհու և գեղջկուհու կենցաղային ազատագրումը: Այս խնդրի լուծման արմատական միջոցներից մեկն և նախադպրոցական դաստիարակությունը, վոր միաժամանակ ապահովում և սոցիալիստական հասարակակարգի ապագա ակտիվ ու հըմուտ կառուցողի դաստիարակությունը:

Կե-ի առաջադրության ուղղակի պատասխանն և լինելու նախադպրոցական գործի նորմալ զարգացումն ու ցանցի ընդլայնումը:

Անհրաժեշտ և վճռական բեկումն մըտցընել այս գործում. բանվորական վայրերում, կոլխոզներում ու սովխոզներում չըպետք և մնան անխնամ յերեխաներ:

Այս գործի հաջողությունը կապահովվի, յերբ նախադպր. դաստիարակությանը ձեռք կղարկեն աշխատավորության հազարավոր ու միլիոնավոր շարքերը: Այդ մասսաների

ջանքերով ու վոգեորությամբ պետք ե արշավս ընդգրկի 100 տոկոսով կազմակերպված աշխատավորության (գործարան, կոլխոզ, սովխոզ) յերեխաներին:

Նախադպրոց, արշավին նվիրված միացյալ խորհրդակցության անունից կենտ. շտաբը գիմում ե բոլոր աշխատավորներին՝ իրենց ուժերով ու միջոցներով լայն հասարակական կամպանիայի վերածել նախադպրոց՝ արշավը՝ հանուն պրոլետար մանկան նորմալ դաստիարակության:

Այստեղ ևս առաջապահ դիրքերում պիտի լինի պրոլետարական կազմակերպված հասարակայնությունը — մեր պրոֆմիությունները, կին պատգամավորունիները, կոմսոմոլը, պիոններները, կոոպերացիան, լուսաշխատավորները և այլն:

Պետք ե շտապ կազմակերպել նախադպրոց, արշավի շտաբները. պետք ե ապահովել շենքերը (ցերեկները՝ ակումբների, կինոների, խրճիթ-ընթերցարանների). պետք ե ներդրավել և ոգտագործել դպրոցական ու պիոններական արհեստանոցները, արտելներին, ծնողներին՝ գույք ու պիտույքներ պատրաստելու գործում։ Պետք ե ուսալ կեր-

պով ոգտագործել կուլտ կենցաղային ֆոն-  
դերի, բանվորների կենցաղը բարելավելու  
ֆոնդի (ՓՍԲԲ) գումարները, կազմակեր-  
պել շաբաթորյակներ, կամավոր հատկա-  
ցումներ և այլն՝ արշավի ոգտին:

**Միացյալ նիստում կենտրոնի և Յերե-  
վանի ներկայացուցիչներն՝ իրենց կազմա-  
կերպությունների կողմից խոստացան ա-  
մենալայն աջակցություն նախադպրոցա-  
կան արշավին իրենց ուժերով, միջոցներով  
և նախաձեռնությամբ:**

**Բանվորներ ու բանվորուհիներ, բատ-  
րակներ ու գեղջկուհիներ—իսոսքը ձերն ե.  
պրոլետարական հասարակայնության ներ-  
կայացուցիչները կոչ են անում ձեղ դեպի  
առաջապահ դիրքերը:**

**Հանուն առողջ և տոկուն փոխարինող-  
ների:**

**Հանուն աշխատավորուհու ազատազըր-  
ման ու մասնակցության սոցիալիստական  
շինարարության գործում, մեր յերկրի քա-  
ղաքական ու արտադրական կյանքում:**

**Բոլորդ դեպի նախադպրոցական ար-  
օսավ:**

## ԼՈԶՈՒՆԳՆԵՐ

Նախադպրոց. գաստիարակության յեզ  
արօավի մասին

1. Նախադպրոցական դաստիարակությունը Հոկտեմբերի զավակն եւ
2. Հեղափոխությունը հեղափոխությունը, յեթե նա մեծագույն ուշադրությունը չի դարձնում յերեխաներին (Լենին):
3. Ն սխադպրոցական արշավի միջոցով — դեպի փոխարինողների կոմմունիստական դաստիարակություն:
4. Վոչ մի զործարան, վոչ մի կոլխոզ, վոչ մի սովխոզ չպետք ե մնա առանց մսուրի ու մանկավարժեղի:
5. Նախադպրոցական դաստիարակության միջոցով դեպի նոր կենցաղ:
6. Կորչի կողջ ազատազրկումը. կեցցեն նրան ազատագրող նախադպրո. հիմնարկները.

7. Բանվորուհի ու գեղջկուհի, մասնակցիք նախադպրոցական արշավին. նա կնըպաստի քո աշխատանքի բարելավման:

8. Պատասխանիք, բանվորուհի՝ ձեր գործարանն ոջախ ունի՞:

9. Պրոլետարական հասարակայնության միասնական ֆրոնտով վճռջ տանք յերեխաների անապաստանության:

10. Լուսաշխատավոր—նախադպրոցական արշավի առաջապահ դիրքերում:

11. Գիոններ, ձեռք մեկնիք քեզ փոխարինողին:

12. Բարեկարգեցիք յերեխաների կյանքն ընտանիքում:

13. Մաքուր ողբ, ջուրն ու արելը—յերեխաների լավագույն բարեկամներն են:

14. Կրօնն ու նախապաշարմունքները թունավորում են յերեխայի մատաղ միտքը:

15. Մանկապարտեզը սովորեցնում ելույթիվ ապրել ու աշխատել:

16. Սոցիալիզմի ապագա կառուցողն առողջ ու տրկուն պետք ելինի:

17. Մանկապարտեզում լերեխան սովորում և աշխատել իր և ուրիշների համար:

18. Կոռովերացիա, ովնիր քո անդամների կենցաղի բարելավման՝ հիմնիր մառը ուժանկապարտեղ:

19. Բնակելուով, սենյակ տուր քո մանուկներին:

20. Նոր շենք կառուցելիս հիշեցնք յերեխաներին:

21. Վերջ մանուկների մահացության:

22. Պայքար առանձին անկողնի ու ամանեղենի համար:



## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### I. Հայերեա

1. Կրուպսկայա Ն.—Մանկապարտեղը գլուզում.
2. Դուրգարյան Մ.—Ինչ և մանկ. հրապարակը
3. Նույնի—Կառուցեք մանկակ. հրապարակ.
4. Նույնի—Մանկապարտեղը գլուզում և քաղաքում (տպագրվում ե)
5. Նույնի—Ի՞նչպիսի գիրք եպետք նախադպրոցականին (տպագրվ. ե)
6. Նույնի—Նախադպրոցականի խաղն ու զվարճանքը (տպագրվում ե)
7. Նույնի — Փոխարինողների դաստիարակությունը (տպագրվում ե)

Հանրամատչելի մանկավարժ. գրադարան

1. Գեշելինտ—Առողջ սնունդ լերեխային.
2. Գրինբերգ—Պահպանեցեք յերեխայի քունը.
3. Մայզել — Ի՞նչպես պաշտպանել փոքր երեխաներին հիվանդություններից.

4. Շաբադ — Ի՞նչպիս դաստիարակել 3—8տ.  
յերեխային.

5. Կրասնագորսկայա — Ի՞նչ նշանակու-  
թյուն ունի շրջապատողների որբնակը.

6. Յոհանսոն — Ինչու յերեխան սնահավատ  
ե դառնում.

7. Շաբադ — Ի՞նչպիս և ինչի մասին խո-  
սիլ յերեխայի հետ:

Գրքուլկներն արժեն 8—12 կ. յուրաքան-  
չչուրը:

Պատրաստ են տպագրության համար

1. Զորնայա — Յերեխայի դաստիարակ.  
ընտանիքում

2. Իզրայիլիտ — Ինչու յերեխան պետք ե  
խաղա ու աշխատի

3. Զալկինդ — Սովորեցրեք յերեխային  
մաքրության.

4. Շաբադ — Ի՞նչպիսի խաղալիք և պետք  
յերեխային:

II. Организация дошк. учрежд.

1. Как организовать детсад (инстр.  
письмо)

2. Дошк. работа в деревне (метод.  
письмо)

3. Дошк. вечерние комнаты.
4. Готлиб — Дошк. работа в жилтова-риществах.
5. Виленская — Дошк. воспитание и работница.
6. „ — Что такое дошк. воспитание.
7. Справочная книга по дошк. воспитанию.


### III.

1. Как организовать выставку.
  2. Уголки — мать и ребенок.
  3. Планы бесед с родителями.
  4. Троицкая — Как надо кормить р-ка.
  5. Митина — Полезн. и вредн. игрушки.
  6. Кулишер — Нельзя наказывать детей.
- Դրասուկներն արժեն 10—20 կուլ. յուրա-  
քանչյուրը:*
-

## Ց Ա Ն Կ

b2

1. Նախադպրոցական արշավի նշանակությունը	3
2. Դեպի նախադպրոցական արշավ	5
3. Նախադպր. արշավի կազմակերպման ծրագիրը	13
4. Թեղիսներ արշավի կազմակերպիչների համար.	23
5. Նախադպրոցական ցուցահանդեսի կազմակերպումը	39
6. Բոլոր աշխատավորներին (կոչ)	44
7. Լողունգներ նախադպր. դաստ. —թյան մասին	49
8. Գրականություն.	52





Ակադեմիական  
լուսահղությունները  
գծապատճենությունները

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.




FL0043925

(114.)

A 7  
79557

М. Дургариан

Справочник дошкольного  
похода



9160 104.